

8. Նախիջեանի հայ կաթողիկէները Հաւատաստփիո ժողովին

[1653 թուական, մայիսի 20]

Մեք ամենեքեան, որ ի ներքոյ ձեռնագրեալ կեամբ ձեր սրբութեանդ ծանուցանեմք եւ կրկնեալ ծնկամբք համբուրեմք զսուրբ զգեստ ձեր, որ մեր եպիսկոպոսն փոխեցաւ յաշխարհէս առ Տէր, Աստուծով վկայութիւն ենք տալիս, որ ոմանք օրինաց դուրս եւ անհաւատար մարդիք, որ առաւել ունին զչարութիւն քան զբարութիւն, որ զիրեանց չարութեան համբաւն տարածեր են բովանդակ Հայաստան յաշխարհս, կամին յորդորել յանօրինօք եւ հերետիկոսովք, կաշառովք եւ ամենեցունց կամովք գնալով եպիսկոպոս լինել: Այլ մեք պարտական գոլով ծանուցանեմք ի ձեր սրբութեանցդ, որ սոցայ ամենայն բանն խաբէբայութիւն, կաշառ հարամզատի եւ հերետիկոսի օգնականութիւն է, ինչպէս իրեանքն չար են՝ հետեւող եւս սոցին չարագոյն են:

Բայց մեք արժանի տեսանեմք զերկու արքս, այսինքն տէր Ջվան Դօմինիկոս Նազարն եւ տէր Յակոբն. եւ խնդրեմք ի սրբութեանց ձերոց, որ դուք ալ արժանի առնէք զսոքա, որ բարի եւ պատուելի մարդիք են ի մէջ Հայաստան, որ միոյն իմաստութիւնն, մեկնութիւն, օրինաց նախանձ եւ յիստակութիւն կայ. եւ միւսն՝ մեկնութիւն, օրինաց նախանձ, յիստակութիւն, քաղաքավարութիւն եւ կառավարութիւն կայ:

Բայց ի սոցանէ ոչ ոք մի անուանեսցի, որպէս ի վեր ասացաք, քանզի խաբէբայ են օրինաց եւ հայրապետաց հայհոյին, հերետիկոսաց եւ օրինաց դուրս մարդկան ընկեր, յայտնի եւ ծածուկ գայլք յափշտակողք, ի պտղոց իրեանց ծանուցանելոց ենք ի ձեր սրբութեանցդ ի հարկաւոր ժամանակի, թէ ո՛րքան եւ ո՛րչափ անկարգութիւն եւ զայթակողութիւն են տուեալ եւ տան ժողովրդոց եւ հայհոյութիւն հայրապետաց եւ օրինաց. այժմ ցանկան եպիսկոպոս լինել՝ զոր ինչ չարութիւն անկատար թողեր են՝ կատարեցցեն, եւ զոր ինչ օրինաց դուրս մարդիք եւ հերետիկոսք կամենան՝ ըստ կամաց նոցին առնիցին եւ այլն: